

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՆԱԽԱԳԱՅԷ ՊԸՐՊԷՆՔԻ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Երեքշաբթի, Փետրուար 23ի երեկոյեան ժամը 7:00ին Առաջնորդարանի Արմէն եւ Կլորիա Համբար Դահլիճին մէջ գումարուեցաւ Պըրպէնքի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Տարեկան Անդամական Ժողովը՝ Նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ Ատենապետութեամբ Տիկին Արաքսի Պոյամեանի:

Ծուխին Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Խաժակ Քինյ. Շահպազեան, Ծխական Խորհուրդի Ատենապետ՝ Տիար Նորիկ Գրիգորեան, Գանձապահ՝ Անտրէ Շամալեան, Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան Ատենապետ՝ Օրիորդ Աննա Առաքելեան եւ Տիկնանց Միութեան Փոխ Ատենապետ՝ Տիկին Արաքսի Պոյամեան հանդէս եկան զեկոյցներով, ներկայացնելով 2009 թուականի տարբեր գործունէութիւնները: Սրբազան Հօր պատգամէն եւ գնահատական խօսքէն ետք, տեղի ունեցան Ծխական Խորհուրդի եւ Հաշուեքննիչ Յանձնախումբի ընտրութիւնները: